

Երևանի պետական համալսարան
Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն

Տեղեկատվական նամակ

«Կրթությունը 21-րդ դարում»

Գիտամեթոդական գրախոսվող հանդեսում հրատարակվող
գիտական հոդվածին ներկայացվող պահանջները

ՎԵՐՆԱԳԻՐ (մեծատառերով, ուղղությունը՝ էջի կենտրոն)

Հեղինակի անուն, ազգանուն

Գիտական կոչում, գիտական աստիճան, էլեկտրոնային փոստ,

Աշխատանքի վայրի անվանում, երկիր

Համառոտ ներածական /հոդվածի լեզվով/

Բանալի բառեր

Հիմնախնդիրը

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն

Հոդվածի նպատակը

Հետազոտության նորույթը

Հիմնական նյութի շարադրանքը

Եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ

Օգտագործած գրականության ցանկ՝ 5-10 աղբյուր, եռալեզու (հայերեն հոդվածի դեպքում սկզբում գրվում է հայերեն, այնուհետև ռուսերեն և անգլերեն: Ռուսերեն հոդվածի դեպքում սկզբում գրվում է ռուսերեն գրականության ցանկը, այնուհետև՝ անգլերեն: Իսկ անգլերեն հոդվածի դեպքում՝ հակառակը: Համառոտագրերին պետք է հաջորդի օգտագործած գրականության ցանկը՝ ամբողջությամբ համապատասխան լեզուներով թարգմանված:

Բովանդակության համառոտագիրը (30 տող, 250-300 բառ), հայերեն հոդվածի դեպքում բովանդակության համառոտագիրը գրվում է ն՝ ռուսերեն, ն՝ անգլերեն, ռուսերեն հոդվածի դեպքում՝ անգլերեն, անգլերեն հոդվածի դեպքում՝ ռուսերեն: Համառոտագրից առաջ համառոտագրի լեզվով գրել հոդվածի վերնագիրը և հեղինակի տվյալները:

Հոդվածի էջերի քանակը. Հոդվածի տեքստը՝ 6 էջ, 2-3 էջ էլ համառոտագրերը և գրականության ցանկը՝ պահանջվող լեզուներով:

Հոդվածի ձևավորման չափանիշները.

A 4 ձևաչափով:

Վերնագիրը գրվում է թավ (bold) և մեծատառերով:

Վերնագրից հետո մեկ տող բաց թողնելով, աջ կողմում գրվում է անուն ազգանուն հայրանունը՝ թավ, այնուհետև հաջորդ տողում գրվում է գիտական աստիճանը և կոչումը, իսկ դրան հաջորդող տողում՝ աշխատանքի վայրը և երկիրը:

Մեկ տող բաց թողնելով՝ գրվում է ամբողջ տեքստը, որը ներառում է համառոտ ներածականը, բանալի բառերը, հիմնախնդիրը, հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծությունը, հոդվածի նպատակը, հետազոտության նորույթը, հիմնական նյութի շարադրանքը, եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ և օգտագործած գրականության ցանկ:

Վերոնշյալ տեքստը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին. բոլոր լուսանցքները (աջից, ձախից, վերևից, ներքևից) 20մմ, միջտողային միջակայքը՝ 1,15, տառատեսակը՝ Sylfean, տառաչափը՝ 11pt, տեքստի ուղղությունը՝ էջի լայնությամբ հավասարեցված, առանց տողադարձի:

Հղումները կատարվում են հետևյալ ձևով. քառակուսի փակագծերում գրվում է օգտագործած գրականության ցանկում աղբյուրի թիվը, որից հետո դրվում է ստորակետ, գրվում է մեջբերված մտքի կամ նախադասության էջը, օրինակ՝ [3, էջ 22]:

Օգտագործած գրականության ցանկը պետք կազմված լինի այբբենական կարգով և ներառի 5-10 աղբյուր, եռալեզու (հայերեն հոդվածի դեպքում սկզբում գրվում է հայերեն գրականության ցանկը, այնուհետև՝ ռուսերենը և անգլերենը, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում սկզբում գրվում է ռուսերեն գրականության ցանկը, այնուհետև՝ անգլերենը, անգլերեն հոդվածի դեպքում՝ հակառակը:

Պահանջներին անհամապատասխանության դեպքում հոդվածները չեն ընդունվում և չեն ուղարկվում գրախոսության:

Հոդվածի էլեկտրոնային տարբերակն ուղարկել հետևյալ էլ. փոստին՝ education21@ysu.am, էլեկտրոնային նամակի վերնագիր պատուհանում գրել հեղինակի ազգանունը, որից հետո գիծ դնել և գրել հոդվածի վերնագրի առաջին երեք բառերը: Ուղարկվող ֆայլի անվանման մեջ նույնպես պետք է գրված լինի հեղինակի ազգանունը, որից հետո գիծ դրված լինի և գրված լինի հոդվածի վերնագրի առաջին երեք բառերը:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝

մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ **Լուսինե Հայրապետյան**

Հեռ.՝ 094-409373

Էլ. փոստ՝ education21@ysu.am